Հավելված 2
Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի
նախագահի 2015 թվականի նոյեմբերի 11-ի
թիվ ՆՈ-**045**-Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏՎՈ ՄԵԴԱԼԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏՎՈԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Սույնով սահմանվում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատվո մեդալի և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատվոգրի նկարագրությունը:

2.Պատվո մեդալը ոսկուց և արծաթի միաձուլումից (հարգը՝ ոսկի՝ 999, արծաթ՝ 925) պատրաստված շրջանակ է, որի վրա պատկերված է ՀՀ Ազգային ժողովի շենքի մոդելը: Պատվո մեդալը երիզված է «ՀՀ Ազգային ժողովի պատվո մեդալ» մակագրությամբ:

3. Պատվո մեդալը կախված է Հայաստանի Հանարապետության դրոշի տեսքով ուղղանկյուն ամրակից:

4. Պատվո մեդալի դարձերեսին փորագրվում է մեդալի հերթական համարը:

5. Պատվո մեդալի հետ տրվում է վկայագիր:

6. Պատվոգրի վրա գրությունները նշված են ուղղահայաց (գրքային) տարբերակով:

7. Պատվոգրի վերևի մասի կենտրոնում «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ» գրություններն են՝ երկու տողով, որից ներքև հակիրճ նշվում է պարգևատրման հիմքը: Պարգևատրման հիմքից անմիջապես հետո նշվում են պարգևատրվող անձի անուն-ազգանունը, որից հետո նշվում են «ՊԱՐԳԵՎԱՏՐՎՈՒՄ Է», «ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ», «ՊԱՏՎՈԳՐՈՎ» գրությունները՝ յուրաքանչյուրն առանձին տողով:

8. Պատվոգրի շրջանակի ստորին ձախ մասում ոսկեգույն շրջանակի մեջ փակցվում է ինքնակպչուն ոսկեգույն փայլաթիթեղից պատրաստված Հայաստանի Հանրապետության զինանշանը՝ ստորին հատվածում Հայաստանի Հանրապետության դրոշի տեսքով երկու զուգահեռ ժապավենով:

9. Պատվոգրի շրջանակի ստորին կենտրոնական մասում՝ զինանշանի դիմաց, նշված է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ» մակագրությունը՝ երկու տողով, որի դիմաց նշվում է Ազգային ժողովի

նախագահի անունը, իսկ նշված գրությունների միջև որոշակի հատված է առանձնացված Ազգային ժողովի նախագահի ստորագրության համար:

10. Պատվոգրի շրջանակի ստորին աջ մասում մեկ տողով նշվում է «քաղ. Երևան» գրությունը և պատվոգրի տրման տարեթիվը:

11. Պատվոգիրը զետեղվում է հատուկ փափուկ թղթապանակում:

**ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի**
**ղեկավար- գլխավոր քարտուղար** **Հրայր Թովմասյան**